

**ՄՈՆԻՏԻՆԳԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՊԱՄՆԵՐԸ ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ԱՆՑԿԱՑՐԵԼ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԱԼԱՏՈՒՄ**

25.10.2019 18:10



ՀՀ փաստաբանների պալատում Մոնիթինգի փաստաբանների միության և Մոնիթինգի փաստաբանների միությանը կից գործող մարդու իրավունքների հաստատության միջև համագործակցության շրջանակներում տեղի է ունեցել սեմինար-քննարկում՝ «Փաստաբանի արտահայտվելու ազատությունը. սահմանափակումները և դերը արդար քննության շրջանակներում» խորագրով:

Բացման խոսքերով հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և Մոնիթինգի փաստաբանների միության նախագահ Ռեմի Լևին:

Քննարկմանը զեկուցումներով են հանդես եկել՝

- Մոնիթինգի փաստաբանների միության նախկին նախագահ - Լյուք Կիրքյաչարյանը - անհատական մոտեցում և դեոնթոլոգիա,
- փաստաբան Ֆարիզա Թումին - Դեոնթոլոգիա. փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումները դրսևորվող վարքագծի շրջանակներում,
- փաստաբան Կլեո Մագուելոն Լեոյ - հակասելու սկզբունքը,
- փաստաբան Սելին Վիլա - փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը քաղաքացիական դատավարության շրջանակում,
- փաստաբան Մարի-Պոլ Կանիզարես - փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը քրեական դատավարության շրջանակում, փաստաբան Ժան-Լուք Վինքել - պայմանագրային կոնսենսուս և արբիտրաժի այլընտրանք:

Քննարկման ավարտից հետո հյուրերը շրջայց են կատարել Փաստաբանների պալատի, այդ թվում՝ Հանրային պաշտպանի գրասենյակի և փաստաբանական դպրոցի հարկաբաժիններում, ծանոթացել են տեխնիկական պայմաններին և հնարավորություններին:





```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```